Գ. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ՅՈՒՆԻՍ 1 1893 ԹԻՒ 10

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Editor, M. S. Gabriel, M. D. 202 W. 23d St. New York Խմբագիր, Տր. Մ. Ս. Գաբրիէլեան

ԿԱՐԵՒՈՐ ԽՆԴԻՐ

Ներկայ թուով կ'աւարտի «Ազգային Քաղաքականութիւն» խորագրով մեր խմբագրական։ Թող ներուի մեզ արգոյ ընթերցողաց ուշն և ուրուշն մասնաւորապէս հրաւիրել սոյն ուսումնասիրութեան վերայ։ Զկայ մեզ համար հարց այնքան արժանի խորախոհ քննութեան և ծանր հակաճառութեան որքան Ազգային Քաղաքականութեան հարցն։ Հարկ է որ յըստակ ըմբռնում ձեւացուցեմք թէ ինչ է իսկութիւնն Հայկական Խնդրոյն, որպէս զի կարող լինինք զայն յաջողապէս լուծելու եղանակն որոշել։ Ի՞նչ խղճալի բան կը լինի, եթէ ազատ երկրաց մէջ հիմնեալ չորս կամ հինգ քաղաքական թերթ ունենալով հանդերձ, այս մեծ խնդիրն ըստ արժանւոյն չքննուի,— եթէ բուն խնդիրն թողլով՝ կողմնակի կամ հեռաւոր հարցերու վերայ վատնուի ուշադրութիւնն։ Առ այժմ ազգային շարժման մասնակից եղողներն —ոչ միայն դիւանագիտականք այլ և եռանդուն յեղափոխականք— առ հասարակ թիւր ուղղութեան կը հետեւին այնու զի ոչ ազգային վերածնութեան են ի խնդիր այլ ուրիշ բանի, կամ թէ ազգային փրկութեան և վերածնութեան առաջին գործն գիւրին և անբաւական միջոցներով ի գլուխ հանել կը յուսան։

Այն հայրենասէր անհատք և Միութիւնք որք «Հայք»ի հրատարակութեան ի նպաստ աջ օգնութեան կարկառեցին, տարակոյս չունիմք թէ իրենց բերանն եղող թերթին այդ հրատարակեալ քաղաքականութիւնն լուրջ քննութեան կ'առնուն և իրենց համամտութիւն կամ դիտողութիւններ կը փութան ծանուցանել։ Ամեն զգօն և ուսեալ Հայու կ'ուղղեմք հրաւէր այս առթիւ գրել թեր կամ դէմ, և օգնել ընդհանուր ազգային համոզում յառաջ բերելու, որ պայմանն է կեդրոնացեալ գործակցութեան։

*

* *

«Հայք» կը բաղձայ հրատարակել երկու յօդուած, մին ոա խորագրով

ԹԷ ԻՆՉՈՒ ՀՆՉԱԿԵԱՆ ԵՄ ԵՍ
միւսն
ԹԷ ԻՆՉՈՒ ՓՈՐԹՈՒՔԱԼԵԱՆ ԵՄ ԵՍ

Առ այս ժամանակ կուտամք որ այդ կուսակցութեանց կարողագոյն անդամներէն ոմանք գրեն բաղձացեալ յօդուածն, հոծ, խորհրդալից, տրամաբանող ոճով։ առանց անձնաւորութեանց ամենեւին դպչելու։ Եթէ աւելի քան մէկ յօդուած ընդունիմք միևնոյն կուսակցութեան կողմէն, պիտի հրատարակեմք լաւագոյնն։

Պէտք է հասկցուի թէ այս մէկ անգամի համար միայն է։ Մէկ լաւ յօդուածկը բաւէ ամեն մէկուն թերէն։

ՀԱՅԿ

HAÏK

Entered as second-class mail matter at P. O., New York, N. Y.

Address Հասցէ
Editor of "Haïk," 202 West 23 St. New York U. S. America.
կամ Redaction de la Revue "Haïk," ԼՆ։

«Հայք»ի իւրաքանչիւր թիւը կը բաղկանայ 16 երեսներէ, և կը հրատարակուի ամիսն երկու անգամ։

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար երկու տոլար կամ 10 ֆրանք

Կանխիկ

ՌՈՄԱՆԴԻԿՈՒԹԻՒՆ

Կարեւոր Խնդիր —Ազգային քաղաքականութիւն։— Հայերէն Լեզու. Ակնայ Գաւառաբարբառ.— ի Պատիւ Հայասէր Պրայսի.— Հայր Պարոնեան Պատուիրակ կ'առաջարկուի. —Ամերիկայի Հայերն. Ամուսնութեան Խնդիր. —Քաղաքական Ազգային և զանազան Լուրեր.

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ մանտատ տը փոսթի միջոցաւ խմբագրութեանը դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 Է. 9դ Փողոց
Պրոտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ցարիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր։

Ո... ... Ա... Ռ... Ն... ... Ռ... Ն... Ն... ... ...

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(Շար. և վերջ Տես թիւ 8դ և 9դ)

Գ

Ուրեմն ընդունինք՝ Հայեր, թէ չկայ օտար տէրութիւն մի որ զմեզ փրկելու համար պատերազմիլ ուզէ. եւ ընդունինք զայն ալ թէ՝ եթէ գտնուէր իսկ, իրաւամբ պիտի պահանջէր որ եւ մենք պատերազմակից լինէինք ըստ կարի։

Դիցո՛ւք, սակայն, թէ տէրութիւն մի, առանց ո եւ է զինուորական աջակցութիւն պահանջելու մեր կողմանէ, յանձն առնոյր զմեզ փրկել պատերազմաւ, պիտի հաւատայի՞նք նորա անկեղծութեան։

Ընենք վերջապէս ենթադրութեանց քան զամենայն ենթադրականն ալ թէ յիրաւի, հաշիւք իմն, հզօր տէրութիւն մի յոտս կանգնէր զմեզ պատերազմաւ փրկելու եւ ինքնօրէն ընելու՝ առանց մեր մարտնչող աջակցութեան, միթէ պիտի կրնա՞ր ճշմարտապէս ազատ եւ ինքնօրէն ընել զմեզ. — ո՛չ։ Կրնար յաղթել Թրքին, կրնար թերեւս բառնալ ամեն առարկութիւն, սակայն չէր կրնար տալ մեզ ճշմարիտ ազատութիւն, չէ՛ր կրնար, քանզի ազատութիւն ըսուածն լոկ արտաքին և ձեւական բան մի չէ զոր ոմն շնորհէ ումեք, ազատութիւնն վիճակ մ՚է որում ժողովուրդն ինքն պարտի կրթութեամբ, մըրցմամբ, ճգամբ հասնիլ։

Ազատութիւնն այնպիսի դրամագլուխ մ՚է զոր գործածել և աճեցուցանել կարենալու համար հարկ է որ մարդ իւր աշխատութեամբ ձեռք բերած լինի զայն. ուրիշէն ձրի շնորհուածն շուտով կը կորնչի։

Եւ այն որ չկրնար ձիու վերայ ելնել հեծնել ինքնին, և ոչ կարող է ձիավարել եթէ ուրիշ ոք նստեցուցանէ զինքն ձիու վերայ. վար կ՚իյնայ շուտով եւ գլուխն կը ճեղքի։

Ի՞նչ օգուտ եթէ ուրիշներ յօժարէին տալ մեզ ոսկորն զոր կը մուրամք, եթէ զայն կրծելու առիւծային ժանիքն չունիմք։

Ի՞նչ օգուտ եթէ տէրութիւնք թագ ընծայէին մեզ երբ թագ կրելու արժանի գլուխ չունիմք։

Կարծեմք թէ կրցանք կատարելապէս յստակ և պարզ կերպիւ ցուցնել այն ահագին ճշմարտութիւնն թէ օտար տէրութիւն մի, թէպէտ ի սրտէ ուզէ անգամ, չկրնար զմեզ իրօք ազատ ընել և ինքնօրէն, եթէ մեք Հայքս ոգի ի բուն մարտնչելով բուռն և հզօր չլինիմք։

Եւ այժմ կրնամք այն Ազգային Քաղաքականութեան զոր իբրև ներսիսեանին հարազատ հետեւորդն կը դնեմք առաջի Ազգին, հիմնական սկզբունքն ճշդել և ըսել—

Խօսքի զօրութեամբ օտարաց միջամտութիւնն խնդրելով ազատ և ինքնօրէն լինելու յոյսը՝ տկարի ցնորք է. պ՚արտ է մեզ մարտնչիլ, արիւն թափել՝ ճշմարտապէս ազատ և ինքնօրէն լինել կարենալու համար։

Հայկական Քաղաքականութեան ողջ և բանաւոր հիմն այդ միայն է, եթէ, ինչպէս ի վերոյ բացատրած եմք, Հայկական Խնդիր ըսելով ոչ թէ Թուրքիոյ Հայոց հարստահարութեանց վերջ տրուիլն կամ նոցա հանգստութիւնն այլ Հայ Ազգութեան փրկութիւնն և Հայաստանի ինքնօրինութիւնն կը հասկնամք։

Այդ հիմնական սկզբունքի առջև կեցած արժան է որ մի քանի կարևոր հարցմանց պատասխանեմք։

(1) Եթէ մարտնչիլ հարկ է ազատ լինելու համար, արդեօք մարտնչիլ կրնա՞մք։

—Այ՛ս կրնամք։ Մեք հաստատապէս կը պատասխանեմք թէ ի Տաճկաստան և յարտաքսահմանի կան հազարաւոր հայ երիտասարդներ որք յօժար են հայրենեաց համար մարտնչիլ, արիւն թափել։

(2) Հնա՞ր է արդեօք այդ երիտասարդաց բազմութիւնն զինել և մարտնչելու ոչ միայն յօժար այլ և կարող ու պատրաստ ընել։

—Այ՛ս, հնար է։ Արդէն մարտնչիլ ըսելով յախուռն և ընդ խօլ ցնցուիլ ըսել չեմք ուզեր, այլ զինուորի զէնքով, զինուորի կրթութեամբ եւ զինուորի ոգւով մարտնչիլ։ Զինուորական կրթութիւնն Տաճկաստանի Հայոց համար անհնար է այսօր, բայց արտասահմանի մէջ դիւրին է։ Եթէ ցարդ ազատ երկիրներու հայ երիտասարդութիւնն զինուորական կրթութեան հետևած չէ, պատճառն այն է զի նոցա առաջնորդողք որոշ կերպիւ ըմբռնած եւ խորապէս համոզուած չեն թէ պէտք է մարտնչիլ։ Յօժար է երիտասարդութիւնն կրթուելու, առաջնորդք են յան-

ըստուգութեան և ի վարանս ։ Գործի կայ, գործիչ կը պակսի ։

(3) Կարելի՞ է արտասահմանի զինուորեալ երիտասարդութիւնն գործածել Տաճկահայոց համար կամ նոցա հետ մէկտեղ պատերազմելու ։

—Այ՛ո, կարելի է, բայց չեմք կարող այդ կարելիութիւնն բացատրել աստէն ։

(4) Այս պայմանաց մէջ՝ ի՞նչ պիտի լինի մեր կացքն հանդէպ օտար տէրութեանց եւ միթէ դիւանագիտական գործունէութեան այլ ևս պէտք կը մնա՞յ ։

—Բառին բուն նշանակութեամբն հայկական դիւանագիտութիւն չկայ այսօր և չկրնար լինիլ, քանի որ Հայոց կառավարութիւն չկայ, և քանի որ Հայերն ո և է դաշնագրի մէջ ուղղակի մասնակցութիւն ունեցած չեն․ Պէռլինի դաշնագրին մէջ Հայու ստորագրութիւն չկայ և Հայք չեն կարող օրինականօրէն դիւանագիտական թղթակցութիւն ունենալ զայն ստորագրող պետութեանց հետ ։ Մեր «դիւանագիտական» համբաւեալ դիմեցմունք եւ թղթակցութիւնք պարզ խնդրագրի բնութիւն ունին և միայն քաղաքավար պատասխանի կրնան արժանանալ ։ Մեր այդ կարգի թղթակցութիւնք ոչ միայն օրինականութենէ զուրկ են այլ և ազդեցութենէ, քանզի ո և է տէրութիւն ոչ ծառայութեան յոյս ունի մենէ և ոչ թշնամութեան երկիւղ ։ Մեր ոչ-օրինական դիւանագիտութիւնն յա՛յնժամ միայն ազդեցիկ պիտի լինի երբ տէրութիւնք համոզուին թէ ոյժ ունիմք և ոյժ գործածելու պատրաստ եմք, որով և գոնէ կարող ի վրդովել միջազգային խաղաղութիւնն կամ օտարի բուռն միջամտութիւնն հարկաւոր գործել յարևելս ։

Առ այժմ արտաքին գործունէութիւն ըստուածն պիտի բաղկանայ Եւրոպայի հանրային կարծիքն ի նպաստ մեր չինելու մէջ, որ կը լինի ոչ թէ «դիւանագիտական» կոչուած մեր թղթերով այլ զանազան հրատարակութեամբք գրոց և յօդուածոց և թղթակցութեանց ։

Մեր այդ կարգի հրատարակութեանց մէջ պարտիմք զգուշանալ վիրաւորելէ ո և է տէրութեան դիւրազգայութիւններն, մասնաւորապէս խնայել ռուսական և անգլիական դիւրազգացութեանց, քանզի Ռուսիա և Անգլիա են որք գլխաւոր դերն պիտի կատարեն արևելեան խնդրոյն լուծման մէջ ։ Երբ սակայն մեք պատրաստ լինիմք մարտնչելու, չպիտի վարանիմք գաղտնապէս կամ յայտնապէս միանալու Ռուսիոյ հետ եթէ սա որոշէ մեր ինքնօրինութեան պահանջին ջատագով լինել եւ մեր մըրցմանց զօրավիգ․— և ոչ ալ պիտի վարանիմք Անգլիոյ հետ միանալու եթէ ինքն միայն գտնուի մեր ազատութեան ջատագով և մեր ճգանց զօրավիգ ։ Մեք բնաւ պիտի չվարանիմք և պիտի չամաչեմք այն տէրութեան շահուց եւ թելադրութեանց համաձայն շարժելու որ մեզ չօշափելի եւ վստահելի համակրութիւն ցուցնէ ։ Զայդ պիտի որոշել կրնամք յետոյ, երբ ոյժ ունենալով յարգելի դառնամք և խընդրողներ ունենամք ։

Այս բացատրութիւն կը պարզէ նաեւ ուրիշ կարեւոր կէտ մի--- մեք պէտք ունիմք ուրիշ տէրութեան մի իրական աջակցութեան․ միայն ի մտի պահեմք միշտ թէ մեր էական և առաջին պէտքն է մեր իսկ զինեալ աջն․ երբ ունենամք աջ, յայնժամ պիտի գտնեմք և աջակից, և յա՛յնժամ միայն արտաքին աջակցութիւնն պիտի ծառայէ մեր ազատութեան ։

(5) Կը մնան սակաւին ազգային քաղաքանութեան ուրիշ երկրորդական կէտեր պատասխանի արժանի--- օրինակի համար թէ բուն Հայաստա՞նն թէ Կիլիկիա աւելի դիւրին է փրկել և հայկական ինքնավարութեամբ օժտել ---թէ ի՞նչ ձեւ կառավարութիւն պէտք է լինի Հայոց ինքնօրէն կառավարութիւնն ---թէ Հայաստանի իշխանն հա՞յ թէ օտարազգի պէտք է լինի, եւ այլն ։

Այդպիսի կէտեր որոշել այժմէն հարկ չէ և ոչ դիւրին ։ Շատ բան իրաց ընթացքէն կախում պիտի ունենայ ։ Բաղձալի է որ բուն Հայաստանն լինի ինքնօրէն իշխանութիւն, եւ իշխանն լինի հայազգի, բայց, ի հարկին, գոհ պիտի լինիմք Կիլիկեայով և օտարազգի իշխանով, նաեւ պիտի կրեմք մեծ և աջակից պետութեան մի թեւարկութիւնն եւ Սուլթանի վեհապետութիւնն ։ Այդ կէտեր այժմ քննել հրապարակաւ կամ ազգային քաղաքականութեան Ծրագրի մէջ որոշ կերպիւ նշանակել՝ աւելորդ և վաղաժամ է ։

Ամփոփելով ցայսվայր յառաջ բերուած գլխաւոր իմաստներն, կ՚ըսեմք թէ

—Հայկական խնդիրն Հայ Ազգութեան գոյութեան ու չգոյութեան խնդիրն է ։

—Որպէս զի Հայ Ազգն ու Հայրենիքն փրկուին, վերածնին, պէտք է որ Հայք ոչ տիրացու այլ աշխարհական, ոչ լոկ խօսող այլ մարտնչող եւ բուռն ժողովուրդ մի լինին։

Խնդիրն ուրեմն աւելի մեծ և ահագին է քան զոր շատեր կը կարծեն։ Եւ այս ահագին խնդիրն յաջողցունելու պայմանն ալ ըստ այնմ աւելի ահագին է։

Խնդրոյն ողջամիտ ըմբռնումն պայման է ողջամիտ քաղաքականութիւն մի յօրինելու, և ողջամիտ քաղաքականութիւնն յաջողցունելու համար պէտք է յարմար միջոցներ ի գործ դնել։

Ի՞նչ են միջոցներն։

Սրոյ, յարձակողական, արիական քաղաքականութիւնն յաջողցունելու համար յայտնապէս երկու միջոց անհրաժեշտ են —պէտք է պատրաստել զՍուր, —և պէտք է ուղղութիւն տալ Սրոյ սայրին։

Ո՞վ պիտի պատրաստէ զՍուրն. ո՞վ պիտի ուղղութիւն տայ այնմ։ Այս ինչ կուսակցութի՞ւնն կամ այն ինչ ընկերակցութի՞ւնն պիտի ընէ զայդ։

Եթէ կը հաւատաք թէ մեր ներկայ խմբերէն մին կամ միւսն կարող է ընել զայդ, մինչև ցարդ յառաջ բերուած խորհուրդներն հասկցած չէք։

Այդ բոլոր մասնաւոր խմբեր կամ ընկերակցութիւններ փոքր ի շատէ օգտակար եղած են իրենց հրատարակութեամբք հանգանակութեամբք եւ այլ ճգամբք, բայց դոքա լոկ նախապատրաստիչ ձրգտմունք են, զարթուցիչ հնչմունք են, որոց պէտք է յաջորդէ միացեալ կամ կեդրոնական վարչութիւն մի։

Ժամանակ է որ բաժան ճգանց յաջորդեն միաբան ճգունք, եւ խմբային ուղղութեան յաջորդէ ազգայինն։

Որքան և գործունեայ եւ եռանդուն լինի այսինչ գործիչ կամ այն ինչ միութեան գլուխն, երբէք երկիւղած հայրենասէրն չկրնար վստահիլ նմա Ազգային լաւագոյն քաղաքականութիւնն որոշելու խնդիրն և զայն իրացունելու գործն։ Շատ միամիտ և անկեղծ երիտասարդներ կան յարգելի, որք սակայն չեն կենար իրենք իրենց միանգամ հարցնել թէ Հայ Ազգի գոյութիւնն եւ ապագայն ապահովելու և Հայաստանն ինքնօրէն ընելու մեծ, սարսափելի գործն այս ինչ անհատին և իր մի քանի արբանեկաց ձեռքն յանձնել արժ՞ան է։

1000 կամ 1400 տարիէ ի վեր ազատութիւնն կորսուած Հայաստանն ազատ ընելու վերջին առիթն կ'ընծայէ դարն, կը կրկնեմ, վերջի՛ն առիթն, և մարդ կայ որ այդ առիթն ի գործ դնելու կամ փախցունելու ահռելի պատասխանատուութիւնն այս ինչին կամ այն ինչին կը յանձնէ։

Եւ ասա իմ արիւն կ'եռայ գլխոյս մէջ, և կը հարցնեմ թէ այսպիսի ճգնաժամու մէջ այսպիսի թեթեւութիւն ոճիր չէ՞։

Երիտասարդնե՛ր, երիտասարդնե՛ր, ես ալ կը ճանաչեմ այդ ձեր առաջնորդներ, և ե՛ս նոցա բարեմասնութիւններն կը գնահատեմ. սակայն և այնպէս կը սարսափիմ անոնցմէ ոևէ մէկուն ձեռքին մէջ Հայրենեացս փրկութեան անդառնալի առիթն յանձնուած տեսնելու։

Այդ արդոյ առաջնորդներու չափ և աւելի ալ թերեւս խելք և փորձառութիւն ունեցող ուրիշ անձինք ալ կան Հայ Ազգին մէջ. մեր մեծ պարտաւորութիւնն է զայնս գտնել ուր որ են — լինին ի Թուրքիա, լինին ի Ռուսիա, լինին խափիւռս աշխարհի, և համոզել ու կազմաւորել անոնցմով մեծ համահայկական կեդրոն մի, արտասահմանեան Ազգային Վարչութիւն մի, որպէս զի ոչ թէ լաւ ուղղութեամբ, այլ հնարաւոր եղած քան զամենայն լաւագոյն ուղղութեամբ և քաղաքականութեամբ յառաջ տարուի ազգային ազատութեան սուրբ գործն։

Երի՛տասարդներ, խորհեցէ՛ք ահիւ և լրջօրէն և աշխատեցէք որ փութով այսպիսի Կեդրոնական Ազգային Վարչութիւն մի կազմակերպուի։

Նաև աշխատեցէք զինուորական կրթութեան խմբեր յօրինել։ Գոհ մի՛ լինիք լուրեր առնլով ու տալով, լրագրեր կարդալով ու հանդէսներ ընելով—կրթուեցէ՛ք, զինուորի արհեստն ուսէք փութով։

Այս երկու միջոցներուն արժէքն ու ծանր կշիռն դիւրին պիտի լինի ըմբռնել այնմ որ յօժարի խորհիլ թէ զինուորական կրթութիւնն լոկ պատերազմիլ չուսուցաներ այլ և բնաւորութիւնն կ'արիացունէ և կը կրթէ, և կեդրոնացումն ալ զմեզ մարմին կազմելու և ինքնօրէն ազգային կառավարութեան կը վարժէ։

Այս երկու միջոցներն, այլով բանիւ, ոչ թէ միայն արտաքին այս ինչ գործո-

ղութիւններն լաւ կատարելու միջոց են, այլ և գմեզ իբրեւ ժողովուրդ թեքելու, ուժովցնելու, տարբեր ժողովուրդ մ'ընելու պիտի ծառայեն։ Ոչ թէ բան մի ընելու, այլ բան մի լինելու խնդիրն է երկու խնդրոց մեծագոյնն։

«Հայրենիքն փրկել,» «Հայաստանն ինքնօրէն ընել» խօսքերն մոլորեցուցիչ բացատրութիւններ են ատոնց համար որք խօսքերու հոգին ըմբռնել չեն ջանար։ Հայաստանն մեք եմք. Հայրենիքն մեք եմք։ զՀայաստան վերածնել՝ գմեզ գըլխովին նորոգուած, կրթուած, փոխուած ժողովուրդ մի ընել կը նշանակէ։ Նոր հայ Ազգ մի ստեղծելու վերայ է խնդիրն։

Սովոր եմք Հայ Ազգ կոչելզմեզ, բայց բառին բուն նշանակութեամբ հայ ցեղ կայ այսօր, ոչ թէ հայ ազգ։ Նոյնպէս և «Հայաստան» ու «Հայրենիք»կ'ըսեմք միշտ, բայց ճիշդն խօսելով մեք Հայերս Հայրենիք չունիմք, Հայաստան չիք։

Հայաստան մի ստեղծելու նիւթ միայն կայ. քայքայեալ հին Հայաստանէն մնացած նիւթ, որոյ մէկ մասն հին երկրին մէջ է, և միւս մասն ցրուեալ է աստանդ։ Հայկական Խնդիրն կամ մեր սուրբ գործն ասածն է այդ նիւթէ Հայաստան մի վերաշինել, Հայ Հայրենիք մի ուր կառավարութիւնն լինի հայկական, և լինի հայոց համար, և ուր հայ հանճարն ծաղկի և պտղատրէ ազատ։ Այդ է մեր ազգային իտէականն։

Արդ, նիւթն զոր ունիմք պատրաստ, ընդունա՞ք է Ազգ և Հայրենիք լինելու։ Հայրենիքն վերաշինելու համար նիւթ պէտք է և շինող պէտք է. լաւ նիւթ և վարպետ շինող։ Նիւթն մեք Հայքս եմք, հայ ժողովուրդն է։ Շինողն մեր առաջնորդք, մեր գործիչք պիտի լինին— կաթողիկոս, պատրիարք, գործիչ կոչուածներն։

Եւրոպացիք որչափ և համակրին մեզ և բաղձան անկեղծօրէն որ Հայաստան վերաստեղծուի — դիցուք թէ բաղձային — նոքա ոչ նիւթն կրնան լինիլ և ոչ նիւթիչն Հայաստանի. մեք պիտի լինիմք նիւթն, մեք պիտի լինիմք նիւթիչն։

Արդ երկու միջոցներն զորս կ'առաջարկեմք, ճիշդ այդ կրկին նպատակին համար են — զնիւթն՝ զժողովուրդն՝ չէնքին յարմարցուցանելու, և զնիւթիչն՝ զգործիչն ճարտարապետութեան վարժելու։

Թէ զինուորական մարզանքն անգին միջոց մ'է մեր ժողովրդեան յարձակողական և արիական մաշած կողմերն լեցուցանելու և կեանքի մրցանքին յարմարցուցանելու, այնմ մեր ընթերցողներն համոզել աւելորդ է ասա։

Դարերէ ի վեր պատերազմ չըրած հայ ժողովուրդն մարտնչելու գաղտփարին և արուեստին վարժելու լաւագոյն նախապատրաստութիւնն և կրնամ ըսել միակ նախադուռն է զինուորական մարզանքի ընկերակցութեան մէջ մտնել։

Չկարծեմք թէ ժողովուրդ մի հրաշիւք կը փոխուի. պէտք է կրթուի։ Նիհար մարդ մի մէկ օրն չկրնար գիրանալ, թէև կրնայ ուռիլ յանչափս. ժողովուրդ մ'ալ կատաղելով կրնայ յանկարծ մէկ աւուր մէջ կռուող և գոռոզ դառնալ, բայց այդ ախտաւոր և վաղանցիկ վիճակ մ'է. երկար մարզանք և կանոնաւոր միջոցներու համբերատար գործունէութեամբ միայն ժողովուրդ մի կրնայ փոխակերպիլ, մարտնչող և զոռ դառնալ։

Զինուորական մարզանքն հայ բնաւորութեան պակասեալ այս ինչ տարրներն հայթայթելու միակ միջոցն լինելով, և հայ գաղթականութեանց մէջ զինուորական մարզանաց խմբակցութիւններ կազմել դիւրին լինելով, կը խոստովանիմք թէ մեք կը գայթակղիմք երբ կը տեսնեմք թէ երեք տարիէ ի վեր այս մասին մեր բոլոր աղաղակն անլսելի կը մնայ նոյն ինքն եռանդուն յեղափոխական և լուրջ երեւցող գործիչներու կողմանէ։ Արտաահմանի յեղափոխական թերթերէն «Արմենիան» բազում անհամ և անպէտ բաներ կը հրատարակէ, «Հնչակն» բազում աւելորդ ճառեր կը խօսի, բայց զինուորական մարզանաց խմբեր կազմելու վերայ բառ մ'անգամ չեն արտասաներ։

Այո՛, գայթակղած եմ ես այդ անհասկանալի զանցառութեան համար։

Երբ Նիւ Եորքի մէջ զինուորական կրթութեան առաջին ընկերութիւնն կազմուեցաւ, ոչ մի թերթ քաջալերական խօսք մի ըսել ուզեց։ Եւ երբ «Մարզարանն» —զինուորական մարզանաց առաջին հայ դասագիրքն, ի Նիւ Եորք հրատարակեցաւ, ոչ մի թերթ,(բաց ի Լոնտոնեան Առմէնիէն որ օտարաց կը խօսի օտար լեզուաւ,) յանձն առաւ խօսիլ անոր վերայ բայց եթէ անարգելու համար զայն...

Զայս մեղադրել կամ զայն քննադատել չէ միտքս, այլ պարզել, կասարելապէս և յետին գործաւորին՝ ալ պարզել թէ զինուորական մարզանքն ու կրթութիւնն երկու էական պէտքի պիտի ծառայեն մեզ — նախ՝ մարտնչող և արի բընութիւն մշակելու, եւ երկրորդ՝ մարտնչելու կարող գործելու զմեզ. այլով բանիւ, մեր բնութիւն փոխելու և մեր երկիր յեղափոխելու։ Մին ներքին կրթութիւն կամ շինութիւն է, միւսն արտաքին գործ— երկուքն ալ անհրաժեշտ։

Արտասահմանի մէջ Ազգային Կեդրոնական Վարչութիւն մի յօրինելու մասին ալ նոյնն պիտի ըսեմ. այն ալ երկու պէտքի պիտի ծառայէ. նախ՝ մարմին կազմակերպելու, միանալու, յէականս միաբանելով և յերկրորդականս տարակարծիք մնալով՝ գործակցելու անգին կրթութիւնը մեզ պիտի տայ. և երկրորդ՝ ազգային սուրբ գործն քան զամենայն լաւագոյն ուղղութեամբ վարելու կարող պիտի գործէ զգործիչն։ Այլով բանիւ, իրարմէ հեռանալով բարբարոս անկախութեան և առանձնութեան մէջ եղող մեր հայ բնաւորութիւնն փոխելու, զայն կեդրոնամէտ և բաղադրելի գործելու պիտի ծառայէ. որ ներքին փոփոխութեան գործն է, —և արտաքին գործողութիւններն, հանգանակութիւններն, շարժումներն ըստ կարգի և պատեհութեան ղեկավարելու կարող պիտի ընէ։

Այս միջոցի վերայ ևս մեր աղաղակներն երեք տարիէ ի վեր չկրցան գտնել արժանաւոր արձագանգ։ Բաց ի մի քանի բանիբուն խմբերէ, ամենուն ալ բանիւ կամ լռութեամբ պատասխանն այն եղաւ թէ այդ կեդրոնական Յանձնախումբ կամ Վարչութիւն անգործնական է, անկարելի է։ Եւ չեն մտածեր այդպէս խօսողներ թէ ազգային վերածնութիւնն իսկ անկարելի հռչակած, Հայոց ինքնօրինութեան ընդունակութիւնն հերքած, ազգային հաւատոյ հիմունքն ժխտած կը լինին այդու։ Մեք ըսել չուզեցինք թէ անպատճառ արտասահմանեան հրապարակին վերայ անուն և աղմուկ հանող այս ինչ գործիչներն պէտք է միանան. լաւ էր թէ կարենային, բայց խնդիրն այն չէ որ դոցա իւրաքանչիւրն իւր առանձնական ուղղութենէն դուրս հանուի և Կեդրոնին մէջ մտցուի, այլ որ Կեդրոն մի կազմուի այնպիսի անձինքներով որք կրթութեամբ, հայրենասիրութեամբ և ազգային գործոց խորին հասկացողութեամբ բարձր լինին և կարենան շրջահայեաց և իմաստուն եղանակաւ վարել ժողովրդեան շարժումն դէպ ի նպատակն։ Այդ կարգի Հայեր կան ի Թուրքիա, ի Ռուսիա, և յԵւրոպա, անոնցմէ հինգն արտասահմանի մէջ ի մի կեդրոնական մարմին համախմբել գործնական է, այնքան գործնական է որքան անհրաժեշտ. բաւական է որ հայրենասիրական Յանձնախումբք կամ Միութիւնք լրջօրէն միջոց ձեռք առնուն դայդ ի գործ դնելու համար։

Ներեցէք, ազնիւ հայրենակիցք իմ, որ վերջին անգամ մ'ալ կրկնեմ թէ ազատութիւնն այնպիսի բան մի չէ զոր առնումք յանկարծ կամ որ շնորհուի մեզ ի հզօրաց, ազատութիւնն վիճակ մ'է զոր պէտք է լինիմք տակաւ։ Հայաստանն մեք եմք. հայրենիքն շինելն է զմեզ շինել։ Կ'ուզե՞մք վերաստեղծել զՀայաստան, կ'ուզե՞մք զայն ինքնօրինութեան շաւղին մէջ դնել,—կարողեմք զայդ սկսիլ այսօր, ա՛յժմիկ։ Զակնկալեմք օտարաց օգնութիւնն, չսպասեմք պատեհ ժամու. օգնեմք մեք մեզ, պատեհ ժամն հասած է։ Սկսի՛նք այսօր շինել այն ներքին, անշօշափելի Հայաստանն որոյ արտաքին պատկերն պիտի լինի արտաքինն։ Սկսի՛նք վերաշինել Հայաստանի ճանապարհներն, սրտէ ի սիրտ, խմբէ ի խումբ, գաղթականութենէ ի գաղթականութիւն շինենք հաղորդակցութեան սիրաշաւիղ ճանապարհներն։ Սկսի՛նք, Հայեր, անմի՛ջապէս սկսինք վերաշինել Հայաստանի գետերն, մեր ջանից ու լումայից կամրջներն միացուենք. մեր փոքրիկ առուակներն իրարու խառնենք, կազմենք խոշոր վտակներ, խառնենք վտակներն ալ իրարու և յօրինենք արագասահ Եփրատ, ահեղագոչ Եփրատ, կարող խոշ և խութ քամահելով յառաջ ընթանալ վեհափառ։ Սկսի՛նք վերաշինել Հայաստանի լեռներն, մեք ցան ու ցիր փոշիներս Հայ Աշխարհին, անգոր, անյօդ և ապիկար, խաղալիկ ամեն հողմոց, քաշենք զիրար, մօտինք, հպինք, միանանք միմեանց, շաղուինք, փակչինք, խտանանք, պնդանանք, քարանանք, և դիզուինք, դիզուինք իրարու վերայ, բարձրանանք, բարդուինք, բլրանանք, նորէն ու նորէն կուտակուինք և լինինք լեա՛ռն, Մասի՛ս լինինք մեծ և երկնաբերձ, վսեմ, յաղթ, փառաւոր, հաստատուն, անխախուտ, անյաղթ և ահաւոր Մասիս ի կեդրոն անշօշափելի Հայաստանին, և թող այդ Մասիս ծնանի զՆոր Հայաստանն փառաւոր։

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒ

ԱԿՆԱՅ ԳԱՒԱՌԱԲԱՐԲԱՌԻՆ

Մեր արդի նորափթիթ գրական լեզուն ինչպէս գրաբարէն նոյնպէս և այլ և այլ գաւառական բարբառներէ բազում ինչ ունի դեռ առնուլ և իւրացուցանել։ Ընտիր հայերէն բառերու և ասացուածոց դանձ կայ ի գաւառս, զոր պէտք է խնամով հաւաքել և հրատարակել։ Ակնայ գաւառաբարբառն, որում քաջ տեղեակ եմք մեք իբրեւ ակնցի, կրնայ արդի հայերէնին ընձեռել հանգանակութիւն ոչ փոքր։ Ներկայ համառոտ յօդուածով կուգամ ներկայացուցանել բանասէր ընթերցողաց ինչ որ Ակնայ գաւառաբարբառի մաշած քարերուն ու խառնիխուռն կուտակութեանց մէջ պատուական ակն կամ գոհար է։ Իցի՛ թէ մեր այս օրինակ զարթուցանէր Կ. Պոլսոյ հայ թերթերն ալ որ խնդրէին իրենց գաւառային թղթակիցներէ լեզուական այսպիսի նամակներ, քանզի համոզուած եմք թէ գաւառաբարբառք պէտք է որ առատօրէն հիւթաբեր լինին դեռ ի պէտս մեր արդի դրաւոր լեզուին։

Ա.

ՀԱՅԿԱԲԱՆ ԱՍԱՑՈՒԱԾՔ

1—ԵՐԵՐՆ ԼԻՆԻԼ։ *Երերամ բային արմատն է երեր, և այս ասացուածոյ մէջ կը նշանակէ զբաղում քիչ կամ չատ իրարանցումով կամ. անսովոր եռանդեամբ։ Կ'ըսեն «Հարսնիքին երերն էինք» «մեղրին երերն են։»*

2—ԵՐԵՐՆ ԻՑՆԱԼ։ *Նախընթացին նման, քիչ մ'աւելի սաստկութեամբ. «դուք ալ բաժինքին երերը տ'իյնաք դալ չաբթու.» «Զբաղիլ» և «պատաղիլ» բայերն անծանօթ են, և այս երկու բաղադրեալ յատկաբանութիւնք կը գործածուին միշտ, որք յայսնապէս յոյժ ընտիր և հին հայերեն են, միայն «յ» նախդիրէն զրկուած. ի հնումն անշուշտ կըսեն եղեր «ի հարսանեաց երերն էաք։»*

3—ՓԱԽ ԴՆԵԼ։ *Կ'ըսուի «ո՞վ է եռեէն փախ դնողը։» Այս ասացուածի մասնաւոր միտքն էմէկուն ետեէ վազել մանաւանդ փախցուցնելու նպատակաւ քան բռնելու։ «Հալածել» բային հոմանիշն է։*

4—ՄՈՒՌ ԱՆԵԼ։ *Լռել, չխօսիլ երբ գանգատելու տեղի կայ։ «Համբերել»ին հոմանիշն է, միայն թէ լեզուն զսպելու կամ խօսքի համբերութիւն կը նշանակէ, մասնաւորապէս։ Խրատելով կ'ըսէ ոք. «մուռ արէ։»*

5—ԿՈՐԾ ԼԻՆԻԼ, ԱՆԵԼ։ *«Կործիլ» և «կործել» նիւթական մտօք կ'ըսուի, իսկ «կործ լինիլ» կամ«կործ անել»բարոյական մտօք։ «Խերն ալ կործ եղաւ։»*

6—ԿԱՑԱՆՔ ՏԱԼ։ *Որոշում՝ վճիռ տալ, եզրակացութեան մի յանգիլ։ «Կայանք մի չաուին։»*

7—ԽԱՂ ԻՑՆԱԼ, ԽԱՂ ՁԳԵԼ։ *Զարթուցանել՝ շարժել՝ գրգռել կիրք, ախտ։«Խիրան խաղ մի՛ ձգեր,» կը նշանակէ նախանձն մի՛ շարժեր։ «Խիրան խաղ է ինկեր»՝ նախանձն արթնցեր է։ «Խաղ իյնալ» հակադիրն է «խաղաղիլ» բային։*

8—ՀՈՒՆ ԵԼԼԵԼ, *ասացուած հանրածանօթ. «Անոր հետ ո՞վ կրնայ հուն ելլել։»*

9—ԱՉՕՔ ԱՆԵԼ, ԱՉՕՔ Ի՛ՈՒՆՕՔ ԱՆԵԼ։ *Աչքով, աչքով ու յօնքով նշան տալ, բան հասկցնել։ Թուղթ խաղալու ատեն «աչօք արիր. աչօք անել չկայ» կ'ըսեն։*

10—ԱԿԱՐ ԳՏՆԵԼ։ *Ստգտանել, թերութիւն տեսնել, խծբծել։ «Դուն ալ էմմէն բանի ակար մի կու գտնես։»*

13 — ԹԵՐ ԵԼԼԵԼ։ *Կողմն բռնել, ի նըպաստ խօսիլ, պաշտպանել։ «Մեզի թեր ելան։»*

Երկու հոմանիշ բայեր ի միասին կը կազմեն ասացուած՝ իմաստի նոր երանգով։

12—ԵՐԸՐԱԼ ՈՒ ԴԵԳԸՐԱԼ։ *«Երերալ» և «Դեգերիլ» հոմանիշներն այսպէս քովէ քով դնելով կ'ըսեն, յանիծելն «երբրաս ու դեգրա՛ս։»*

13— ՈԼԸՐԻԼ ԲՈԼԸՐԻԼ։ *Կըսեն «Կոլբրի կու բոլբրի» իւր փեսին վերայ խօսիլ կը սկսի, կամ «ա՛ոլբրիք տի բոլբրիք հոս տի գաք։»*

Բ

ՀԱՅԿԱԲԱՆ ԲԱՌԵՐ

14—15. ՇՈԼՈՐԻԼ, ԽՈԼՈՐԵԼ։ *Ոլորիլ բային մի քանի հոմանիշ լծորդներն ծա-*

նօթ են արդէն գրաւոր հին լեզուի մէջ, այն է «բոլորել,» «ջոլորել,» «մոլորել,» երկու լծորդներ ալ Ակնայ գաւառաբարբառին մէջ կը գտնուին, որք են «չըլըրիլ» և «խոլորել»․ Երեսը ետին չըլըրեցաւ» կ՚ըսեն, և «աչքերը կը խոլըրէ։» Այս երկու հոմանիշներն իրենց տղաւաղումէն չխտկուելով կը լինին ընտիր բառեր, չոլորիլ և խոլորել, երկուքն ալ բնախօսական կամ ախտաբանական առումներով։

16—19․ ԿԵՐՔ, ԵՌՔ, ՀԵՒՔ, ՀՈՒՐՔ, ախտաւոր վիճակ ներկայացնող բառեր են, «կեր» (կերակուր) «եռ», «հեւ» (հեւալ), «հուր» բառերուն վրայ «ք» մասնկան յաւելմամբ։ Այդ «ք» որ ինքն յոգնականակերտ տառն է, այս պարագային մէջ ըսքանչելապէս կը ծառայէ նշանակեալ բանին յաճախմանէն, իբր չափազանցութենէն յառաջ եկած ախտաւորութիւնն․ այնպէս որ «կերք է ինկեր» փայտեղէնին կամ հանդերձեղէնին մէջ՝ ըսել է ուտիճի կամ այլ աննշմարելի գործիչի միջոցաւ ուտուիլ, փճանալ, սնանալ սկսած է իրն։ Վէրքին թորբոքմանէն յառաջ եկած ջերմութեան կ՚ըսեն «հուրք», և դժուարաշնչութիւն պատճառող պռոնշիդէ կամ այլ ներլանջային ախտերէ տառապողն «հեւք» կը լինի։ «եռք»ն մորթային ախտերէ յառաջ եկածին կ՚ըսուի։

20—22․ ՎԱՅՎԵՐ, ՄԱՂԱՂՈՒ, ԿԱՄԿԱՐ։ Այս հոմանիշ բառերու վերջինն, «կամկար», կրնայ օտար լինիլ, իսկ «վայվեր» և «մաղաղու» հայկաբան են յայտնապէս։ «Վայվեր» բառին ուղղագրութիւնն կարծեմք է «վայրվեր», այսինքն վայրն ու վերն խառնուած, անորոշ, ինչ որ վայր պիտի լինէր վեր եղեր է։ «Վայվեր» կ՚ըսէ մայրն տղուն, յանդիմանելով կամ նախատելով, եթէ տղան ինքն իրեն խնամ տանելու, իւր զգեստներն յարդարելու մէջ ապիկար գտնուի։ «մաղաղու»ն ալ անոր մերձաւոր հոմանիշն է, բայց աւելի ընդարձակ մտօք ապիկարութիւն, թուլութիւն անճարակութիւն կը ցուցնէ։

23․ ԳԻՇԵՐՓԱԽ, կը նշանակէ գիշերային փախուստ․ «գիշերփա՞խ է։»

24․ ԾՂԾԻՂ կ՚ըսեն մանկանց վրայ խօսելով․ «չարթուս պինտ ճղճեր է,» կը նշանակէ թէ տղեկն աւելի տկարացեր, վատեր և դիւրագրգիռ ու լացող եղեր է։

25․ ՄԱՐՏԵՍԻԿ այն տղուն կ՚ըսուի որ իւր իւր մօրմէն չուզեր երբէք զատուիլ։

26․ ՆԸՆՆԻԿ չնչին, երկրորդական պիտոյք կը նշանակէ․ «Մէկ նըննիկէն ետ չմնար։»

27․ ՁԵՌ մակբայ է, չափազանց բորբոքմամբ՝ ըսել է, այդքան «ձեռ մի վառեր կրակը։»

28․ ՔԱԼԻԿ է նոր ոտքի ելնող տղոց կակուղ փոքրիկ կօշիկն։

29․ ՏՈՏԻԿ, (ոտիկ՝էն հաւանօրէն), ոչխարաց (ոչ առջառոց) ոտքն։

30․ ԳԵՐԵԿՆԱԼ կը նշանակէ աղաչել «գերի» բառէն։

31․ ԲԱՆՊԱՌԱԿ կ՚ըսուի ցուարճաբան մարդուն։

Գ

ԱՆԷԾՔ

Մահն ի քե՛զ․ մահն ինք։ Վերնա՛ս։ Հո՛ղը դնիմ։ Արեւդ հո՛ղը դնես։ Ջիք լընիս մուրը գրուի՛ս։ Մրվի՛ս։ Ջիլլիս ու չկատարի՛ս։ Վեր չելլե՛ս։ Օնիք (անցնիք) Մոխիրդ հովը տանի՛։ Կրա՛կ թափի վրատ։ Ծակծկի՛ս, ծակտիտ ո՛րդ լցուի։ Փաթուրկի՛ս։ Առտու չիյնի՛ս։ Տուն չհասնի՛ս։ Աճողկոտո՛ր սափուիս։ Ձեռքունքդ կռնծի՛։ Ոտքդ կոյյի՛։ Շան սատակ ելլե՛ս։ Գրողը տանի՛։ Երկնաւորէ՛ն գննես։ Զորնայ ձեռքդ։ Քորնա՛ս։

Դ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՄԱՂԹԱՆՔ

Հալւո՛րիս (ալեւոր լինիս)։ Ողջ մնաս։ Շա՛տ ապրիս։ Երկտնարեւ լընիս։ Աս ջըրին պէս երկանարև լընիս։ Աս ջրին պէս վազէ ու դայ Հայրիկդ։ Ջանտ անսպա՛ռ։ Ձեռքդ դալա՛ր։ Չէ՛ն մնաք։ Շէ՛ն կեցի։ Մարսակա՛ն։ Անո՛ւշ։ Կենդանի կեցի։ Աչքըդ լո՛ւս։ Լուսով կեցի։ Աչխըրքի պարծանք լընիք։ Զոր բռնես կանաչ դառնայ։ Քար բռնես ոսկի՛ դառնայ։ Երթաս բարով գաս բարով։ Ոտքունքդ քարը չզարնես։ Աստուած բերնի համով ուտել տայ։ Միապսակի ծերանաք։ Ես քեզ տեսնիմ, դիւն հազար բարի։

Ե

ՍՊԱՌՆԱԼԻՔ, ՑԻՇՈՑՔ, ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆՔ

Հը՛մա բիրը կ՚առնիմ կողերդ կու մընիմ։ Հը՛մա ագինս տակը կառնիմ քեզ․

Ոսկորներդ կու լոսիմ։ Երեսի ա՛ղտ։ Երեսի մուր։ Խրէղէ՛ն մին ես եղեր։ Հէլվա կայ կ՚ուտե՞ս։ Առե՛ր ես։ Խէնչէրիտ քա՞ռը կ՚իլնէր։ Թանթո՛ւշ։ Թանբե՛ռան։ Բարա՛կ-պռկներ։ Ցախմո՛ռուք։ Կովո՛ւ գլով։

(Կենդանեաց նմանցուներով ալ կ՚անարգեն ռամիկք և կ՚ըսեն. Ա՛րջ, կո՛վ, օ՛ձ են, տղոց ալ կուտան կենդանեաց ճագուց անուններ, հո՛ռթ են։)

Վերոյիշեալ հայկաբան ասացուածոց և բառերու ամենն ալընպիր են և նոր գրական լեզուին մէջ ընդունելու արժանի։ Միայն 10ռդն (ակար գտնել), հայերէն չերեւիր, և 30ռդն (գերեկնալ) աւելորդ է։ Գ. Դ. և Ե. հատուածներուն մէջ ալ կան ընտիր ոճեր։

Հաւանական է թէ ինչ որ ասա տուինք իբրեւ Ակնայ գաւառաբարբառ, մեծ մասամբ ծանօթ է նաև ուրիշ գաւառաց, սակայն կրնայ լինիլ որ ինչ ինչ պահուած լինին Ակնայ ժողովրդին մէջ միայն։

Մեք մտադիր եմք աւելի յաճախ գործածել վերի ընտիր տարրերն և նմաններն այս թերթի մէջ։ Ներկայ յօդուածով փոքր ի շատէ ծանօթացուցած լինելով զայնս, նորաբանութեանց հնարող չպիտի երևիմք ընթերցողաց երբ այսպիսի տարրեր տեսնուին մեր գրուածոց մէջ։

Ի ՊԱՏԻՒ

ՀԱՅԱՍԷՐ ՊՐԱՅՍԻ

Մայիս 12ին, ի Լոնտոն, Անգլեհայկական Ընկերութեան կողմանէ ընթրիք մի տրուած է ի պատիւ Տիար Ճէյմս Պրայսի։ Փարիզի Հայրենասիրական Ընկերութեան նախագահ Մեծ. Իսկէնտէր ևս ներկայ էր, և Նիւ Եորքի Նորակազմ Հայրենասիրական Մասնախումբն ևս ուղերձ մի յղած էր այն առթիւ, այնպէս որ ցոյցն բաւական ընդհանուր հանգամանք մ՚առաւ։ Եւ յիրաւի Ազնիւ Պրայս, իբրեւ հայասէր ոք, որ յաճախ գրած և խօսած է ի նպաստ Հայոց, արժանի էր այդպիսի ցոյցի։ Տիար Պրայս ի մօտոյ կը ճանաչէ զՀայաստան և զՀայս, և իւր հայասիրութիւն կը բխէ հաստատուն իրազիտութենէ։ Տիար Իսկէնտէր իւր բաժակաժառի մէջ զՀայաստան կոչեց որոշան վերածնող մարդկութեան, և Նիւ Եորքէն յղեալ ուղերձն կը մաղթէ որ Տիար Պրայս, երբ վերստին պատեհութիւն ունենայ Արարատայ վերայ ելնելու, ի գագաթանց անտի կարենայ ի զնին կալ ոչ աւերակաց այլ յուռթի դաշտաց և նորափթիթ չէն Հայաստանի։

Լոնտոնի «Տէյլի Նիւզ»ն այդ ընթրիքի առթիւ կ՚ըսէ թէ «Արդի Արեւմտից պարտաւորութիւնն է հատուցանել իւր պարտքն առ Արեւելս հսկելով այսպիսի ուժով ցեղերու նոր կենաց զարգացման վերայ։ Իրաւունք ունիմք մեք նայելու որ Պէրլինի դաշնագրոյն յանձնառութիւնք ի գործ դրուին, և Անգլեհայկական Ընկերութեան նպատակն է զայդ ընել տալ։ Նա Սուլթանին հետ կռիւ չունի, և ոչ թշնամութիւն Թուրքիոյ. այլ կը հաւատայ թէ Հայաստանի վարչութեան կատարեալ բարեկարգութիւն մի նոր ոյժ կը բերէ Բ. Դրան։ ...Տիար Պրայս, երէկ երեկոյ խօսելով իբրեւ նախարար, ի հարկէ և իմաստութեամբ զգուշաւոր էր։ Ժողովն գլխաւորապէս Տիար Պրայսի անցեալ ծառայութեանց նկատմամբ էր և ոչ թէ անկէ նոր բան մի ուղղակի խնդրելու համար։ Սակայն պէտք չկայ որ այլք ևս նոյն պէս լռութիւն պահեն, և մեք որոշապէս կը պնդեմք, Տիար Ֆ. Ս. Սթիվընսընի հետ (Նոր նախագահ) թէ պէտք է հնչում գործուի Բ. Դրան վերայ ի գործ դնել Պէրլինի դաշնագիրն գոնէ ավահովելով Հայոց պաշտպանութիւնն ընդդէմ Քրդաց և Չէրքէզաց։»

Պոսթոն, 93 Մայիս 27

Խմբագիր Տէր,

9 թիւ «Հայքի» մէջ Ձեր առաջարկի մասին, զորս ուղղած էիք Մանչէսթրի հոգեւոր հովուին իբրեւ պատուիրակ Հայ Եկեղեցւոյն Շիքակոյի համաժողովին ներկայանալու մասին. այս առթիւ Պոսթոնի Ազգ. Միութիւնն լուրջ ուշադրութեան առարկայ ըրաւ և որոշեց գրել ձեզ իր համակարծիք ըլլալը Հայր Պարոնեանի իբրև պատուիրակ ներկայանալու մասին, ուստի կանխաւ կը ծանուցանեմ Ձերդ խմբագրութեան։

Ի դիմաց Պոսթոնի Ազգ. Միութեան
Ատենադպիր
Պ. Ս. Կեօլճիկլի

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԵՐՆ

ՍՄՈՒՄՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Ամերիկայի Հայերուն համար դժուարալոյծ բայց շատ կարեւոր խնդիրմ'է ամուսնութեան խնդիրն։

Շատ մարմնաւոր և բարոյական ախտաւորութիւններէ զերծ մնալէ զատ, Հայերն աւելի պատուաւոր պիտի հանդիսանային Ամերիկացւոց առջեւ եթէ ամուսնացեալ կեանք վարէին։

Միացեալ Նահանգաց մէջ այսօր առնուազն 2000 հայ երիտասարդ կայ ամուրի, ամուսնութեան լեցուն հասակին հասած, որ արդարեւ ամուսնանալ կը բաղձան ու չեն կրնար։ Չեն կրնար՝ կէսք հաստատուն գործ և բաւական դրամ չահելու միջոց չունենալով, և կէսք՝ աղջիկ չգտնելով։

Վերջիններուն մասին խօսելով այժմ, կը տեսնեմք թէ դոքա կամ ամերիկացի աղջիկ առնլու են կամ հայ։ Ամերիկացի կամ Ամերիկայի մէջ հաստատուած օտարական աղջիկ առնուլ շատ դժուար է։ Բուն Ամերիկացի օրիորդն բարուք և ոգւով այնքան անմման է Հայու որ այնպիսւոյն լծակցութիւնն ընդ հայ երիտասարդի պիտի լինէր ամուսնութիւն հրոյ ընդ խոտոյ։ Արդէն եաթքի օրիորդն իւր հայրենակիցներուն հետ անգամ ամուսնանալ չուզեր ի որիոյ մղեալ, այլ կը հաշուէ ամեն ինչ, զի հաշուելն է Ամերիկացւոյն բնաւորութեան մեծ յատկանիշն։ Նա արդէն երիտասարդի նման կ'աշխատի ինքզինք ապրեցուցնելու, գործ մի սովրած է, արհեստ մի գիտէ, գրագիր, դրամընկալ, ուսուցիչ կամ գործաւոր է, և ամենեւին չուզեր ինքզինք ամուսնական կեանքի դժուարութեանց և էրիկ մի գոհ ընելու հոգերուն մատնել եթէ յետ ամուսնութեան չպիտի գոնէ ապրուստի ամեն հոգէ ազատի։ Նա կը պահանջէ ուրեմն որ իւր այր լինելու անձն եկամուտ ունենայ, կամ 40—50 թալէռի շաբաթական թոշակ մի։ Եւ որովհետեւ այդպիսի երիտասարդներու թիւն մեծ չէ, օրիորդաց մեծ բազմութիւն մի կը մնայ կոյս կամ անամուսին։

Մեր հայ պանդուխտներուն մէջ յայտնի է թէ այդպիսի նիւթական պահանջմանց գոհացում տալու կարողներն բացառիկ են, թող ֆիզիքական և քաղաքավարական կարգ մի հանգամանաց ևս բաղձացեալ աստիճանն ունենալու դժուարութիւն։

Եւրոպայի այլ և այլ երկիրներէն, Զուիցերիայէն, Իռլանտայէն, Ֆռանսայէն, Գերմանիայէն եկած օրիորդներն Ամերիկացւոց պէս խստապահանջ չեն. նոքա ամուսնանալէ յետոյ ալ աշխատելու, իրենց ամուսնայն օգնելու յօժար են ընդհանրապէս։ Ֆռանսացի և Զուիցերիացի բազում երիտասարդներ նիւ Եորքի մէջ կ'ամուսնանան ամեն տարի, թէև 15—20 տարիի շաբաթական թոշակ ստացող լինին, քանզի իրենց համագգեաց մէջ կը գտնեն յարմար օրիորդներ, որք ամուսնութեան օրէն մեծ Տիկին լինելու և մատն ի մատիր չթաթխելու յաւակնութիւնն չունին։

Հայ երիտասարդներէն մի քանիներ որ ամուսնացած են օտարական աղջկանց հետ, ընդհանրապէս ո'չ բնիկ ամերիկացի այլ գաղթական օտարուհիներ առած են։

Յայտնի է թէ Հայ երիտասարդաց անհուն մեծամասնութեան համար միայն և միայն հայ աղջիկ կը յարմարի, քանզի ոչ միայն այս երկրի մէջ կրնան զիրեար աւելի գոհ ընել այլ և երբ կարենան հայրենիք վերադառնալ։

Խնդիրն այն է սակայն որ հայ երիտասարդք հարիւրներով կը վազեն կուգան Թուրքիոյ այլ և այլ կողմերէն, բայց օրիորդներ հոն կը մնան։

Մի քանի տարի առաջ Խարբերդու դաշտին հայ օրիորդներն բոլոր բարձած էին իրաց այս անկանոն ընթացքին դէմ, և իրաւամբ։

Թուրքիայէն մեկնող երիտասարդն ինքզինք Ամերիկա ձգելու դժուարութեան կը պատահի ի մէն մի քայլափոխի. շատ զգուշութիւն և շատ դրամ պէտք է նմա, և այդու ամենայնիւ շատ նեղութիւններ կրել։ Ի՞նչպէս կարելի է որ ամուսնանայ կամ կին ի միասին բերել փորձէ։ հոս հատնելէն ամիսներ կամ տարիներ վերջն երբ հայ կին մի առնլու վիճակին կը հասնի, այն ատեն ալ կին չկր-

նար գտնել։ Ինքն չկրնար ետ երթալ կին բերելու, օրիորդներ չեն կրնար գալ յԱմերիկա էրիկ փնտռելու, ուստի և նոքա հոն կը հառաչեն և սոքա հոս կը թառաչեն։

Այս բանին ի՞նչ հնար կայ։

Սպասելով որ գիտցողներն հրապարակ հանեն հնարն, մեք ըսենք ինչ որ գործնական և բանաւոր կ'երեւի— Ո՛ր երիտասարդ որ նիւթական գոհացուցին վիճակ ունի, իւր հասուն քոյրն թող յԱմերիկա կանչէ, այս կերպով եկող 10 օրիորդին 9ն, եթէ չափազանց տգեղ չէ, յարմար երիտասարդէ մի կը յափշտակուի ի կնութիւն։

Այս միջոցն է, ըստ մեզ, Ամերիկայի Հայոց թշուառ վիճակին կարեւոր մէկ դարմանն։

Քաղաքական Ազգային

եւ

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐ

ԱՐԱԲԻԱ ԱՆԿԱԽ ՊԻՏԻ ԼԻՆԻ՞ ՍՈՒԼԹԱՆՆ ՊԻՏԻ ԻՑՆԱ՞Ց

Լոնտոնի Փալ Մալ Կազէթին Կ. Պոլսէն ուղղեալ թղթակցութիւն մի հետեւեալ կարեւոր տողերն կը պարունակէ։—

Ցայտնի է թէ Նորին Վեհափառութիւնն (Սուլթանն) ամեն տեսակ զիջում, ի Սիւրիա, Ֆռանսացւոց և միայն Ֆռանսացւոց կ'ընէ։ Այս զիջում յառաջ պիտի բերէ եւրոպեան տէրութեանց միջամտութիւնն այս գաւառի մէջ և Արաբներու անկախութիւնն ընդ արաբ խալիֆայիւ պիտի ընթանայ իւր ընթացք։ Պարտիմք ըսպասել մօտաւոր ապագայի մէջ — գուցէ մօտալուտ ապագայի մէջ — պետական հարուածի մը ի Կ. Պոլիս, որ պիտի յապուշ կրթէ զաշխարհ. սոֆթաներն պիտի յարձակին Եըլտըզի վերայ, պիտի բանտարկեն զՍուլթանն, և զնորին եղբայրն զՌէշիտ էֆէնտի կայսր պիտի հռչակեն։»

*

* *

ԼԵՌԱՆԱՆԻ ՄԷՋ ՑԵՂԵՐՈՒ ԿՌԻՒ

Ապրիլ 29ին 3000 բնակչօք գիւղաքաղաքէ մի քիչ հեռու քրիստոնեայ (մարոնիթ) մի կը ճանբորդէր չորս Տրուզի հետ։ Սոքա նախ կը թշնամանեն զքրիստոնեայն, կրօնքին կը հայհոյեն և վերջապէս կը ծեծեն։ Քրիստոնեայն ընկճեալ՝ կը քաշէ դաշոյնն և կը մխէ զայն ի կուրծս միոյն իյարձակողաց և այնպէս կը պրծի։ Տրուզներուն նշան տալուն՝ 800 գինեալ մարդիկ պատրաստ են գիւղաքաղաքին քրիստոնէից վերայ խոյանալու, բայց կառավարութիւնն ժամանակին կը միջամտէ զայնս պաշտպանելու։

Սակայն քանի մ՝օր յետոյ քրիստոնեայ մի, ճամբան չորս Տրուզներու հրացանի գնդակաց ներքև կ'իյնայ կը մեռնի։ Նմանօրինակ ուրիշ դէպքեր ևս պատահեր են։

Քրիստոնեայք ևս զէնք առած՝ պատրաստ են Տրուզներուն վերայ յարձակելու։ Կառավարութիւնն խոհեմութիւն համարած է զինուորական շղթայիւ շրջապատել երկու կարեւորագոյն գիւղերն, զՊաքլին և զՏՀէր-էլ-Քամար, մին քրիստոնեայ, միւսն տրուզ, յորոց միշտ կը լինի ընդհանուր ապստամբութեանց չուկէտն։ Լիբանանու կառավարչին խնդրով՝ Պէրութէն զինուորական օգնութիւն յղուած է։

*

* *

Վանի մէջ Փոլիս Նուրիի սպանման խնդրով 70—80 բանտարկեալներէ 6—7ը չարաչար տանջանաց տակ նահատակուած են, իսկ մնացեալք դեռ բանտն են։ Հայատեաց աւազակ Պէհրի փաշան իւր այս և սորա նման բարբարոսութեանց համար

սուլթանէն ա. կարգի օսմանիյէ պատուանշան ստացաւ։ ՀՆՉԱԿ

*

* *

Դատական Նախարարութիւնը պաշտօնագրով մը հաղորդած է Ս. Պատրիարքին՝ Պետական Խորհրդոյ մէկ որոշումը, որով մայրաքաղաքիս թաղերուն մէջ գտնուած աղքատախնամ ընկերութիւնք կ'արտօնուին տոմսակներու միջոցաւ հանգանակութիւն կատարել՝ կարօտելոց ամեն կերպով օգնելու համար։ Ս. Պատրիարքը յանձնարարեց Ելեւմտից Տեսչութեան որ այդ ընկերութիւններու նպաստի տոմսակները կնքելով յանձնէ իրենց։

ՄԱՍԻՍ

*

* *

Անգլիոյ պատկերահանդէսին տարեկան ցուցադրութեան մէջ կայ Օր. Նիլտա Մոնդալպայի նկարած յաջող մէկ պատկերն, որ Հայոց վանք մի կը ներկայացունէ։

*

* *

Որոշուած է որ Կ. Պոլսոյ Ազգային Պատրիարքանի շէնքն քակուի և ի նորոյ կառուցուի։

*

* *

«Ռըվիու տէ Տէօ Մոնտ»ի Մայիս 15ի թուոյն մէջ, «Ի Թուրքիա» խորագրով յօդուածին հեղինակն հետեւեալ տողերն կը գրէ Հայոց մասին.—

«(Զմիւռնիոյ) այս փոքր գաղթականութենէն չկրնար դատուիլ հայ ցեղն ըզգուշաւոր և յամառ, որ կը դիմանայ, հոծ խմբակցութեամբ, ի հեճուկս Թուրք պաշտօնէից և Քիւրդ աւազակաց, ի լերինս Վանայ, և որ, կ'ըսեն թէ, հակառակ աղէտից և երկար միջոցաց, Կարնոյ պանծալի ներքնաբերդն քաղաքակրթութեան հետ վերստին կապակցելէ անյոյս չէ։»

«Հայք»ի խմբագրին անկարելի եղաւ, յանկարծադէպ արգելքներու պատճառաւ, երթալ ի Շիքակոյ և խօսիլ Հանրային Մամլոյ Համաժողովին։

*

* *

Մալաթիոյ մէջ Ապրիլ 27ին դիշերն երկու անգամ երկրաշարժի ցնցումնք ըզգացուեր են, սակայն ոչ էնաս չէ պատահեր։ Զմիւռնիոյ մէջ ևս երկրաշարժի թեթև ցնցումներ զգացուեր են։

*

* *

Պուլկարիոյ կրթական նախարարի հրամանին համեմատ, Շուլմայի քաղաքապետութիւնն վերստին ծանուցեր է տեղւոյն Հայոց վարժարանին տնօրինութեան թէ յառաջիկայ Սեպտեմբեր 1էն սկսեալ ի գործ պիտի դրուի կրթական նոր օրինաց այն յօդուած որ կը տրամադրէ թէ պուլկարահպատակ բոլոր քրիստոնեայ հասարակութեանց վարժարանաց մէջ նախնական ուսմունք պուլկարերէն պարտին աւանդուիլ։

Կը յուսամք թէ պուլկար կառավարութիւնն Հայոց մասին բացառութիւն պիտի ընէ, քանի որ չէ կարելի ենթադրել թէ հայ հպատակներն պուլկարացուելու դիտում ունի։ Վերոյիշեալ օրէնքն յօրինուած է ուրի՛շ տարրերու պուլկարացումն յառաջ տանելու նպատակաւ։

*

* *

«Մոսլըմ Ուըրլտ» ամսաթերթն, որ Ամերիկայի մէջ մահմետականութիւն ծաւալելու նուիրեալ է, առաջին թիւին մէջ կը ցուցնէ խմբագրին գիտութեան չափերն և բնաւորութեան հանգամանքն։ Աւասիկ թէ ինչ կ'ըսէ, յէջ 9, Փոքր Ասիոյ վերջին յուզմանց մասին.—

«Անգլիական և ամերիկեան լրագրեր

մեծ աղմուկ կը հանեն Հայ քրիստոնէից համբաւեալ հարստահարութեանց մասին յերեսաց Միւսլիմանաց որ ի Զմիւռնիա, Տրապիզոն և Անատոլուի ուրիշ տեղերն։ Քրիստոնեայք տարիներէ ի վեր կը հարստահարէին զմիւսլիմաններն այդ երկրի մէջ, և թերթերն, կ'երեւի թէ, բնաւ չլսեցին այդ բանն. բայց այժմ որ միւսիւլմաններն, այլ ևս անկարող լինելով ժուժալու այն թշնամանաց և հարստահարութեանց զորս Հայերն կուտեցին ի գլուխ նոցա, սկսած են փոխարինել, լուրերն զարմանալի արագութեամբ կ'ընթանան ընդ արեւմտեան կիսագունդն։»

Բարձրագոյն Դրան յոռեգոյն պաշտօնեայք ալ մտածել չէին կրնար այդ գիւտ զոր նորափետուր խմբագիրն մտածեր և ի գիր առեր է —թէ ասկէ առաջ Հայե՛րն են եղեր որ հարստահարեր և թշնամաներ են զթուրքս, և ա՛յնքան որ Թուրքք այլ ևս չեն կրցեր դիմանալ և վրէժ լուծել սկսեր են։ Արժան է որ աշխարհ յապուշ կրթի Մուհամմէտ Ուէպի վերայ։

Ամենասպչելի խմբագիրն կ'ըսէ յէջ 15.—

«Նորին կայսերական բարձրութիւնն, Թուրքիոյ Սուլթանն, իւր մասնաւոր առատաձեռնութեամբ, ընծայած է լիուլի փոխարինութիւն ընել Հայ Քրիստոնէից համբաւեալ հարստահարութեանց և Տր. Հէրիքի Մարսուանի գոլէֆին վերայ եղած յարձակման, թէև քրիստոնեայք ինքեանք էին իրօք մեղադրելի բոլոր յուզմունքին համար։ Սուլթանն առաւ այս քայլ առանց ոևէ պաշտօնական պահանջման՝ ճնշման կամ ակնարկութեան մեր կառավարութեան կողմանէ, այլ էր բոլորովին կամաւոր, մղեալ, հաւանօրէն, յուզեալ գաւառաց ժողովրդոց մէջ ներդաշնակ յարաբերութիւն հաստատելու բաղձանքէն։ Ինչպէս ամեն ճշմարիտ միւսիւլմանի, Նորա հաստատուն փափաքն է խաղաղութիւն և եղբայրական սէր յառաջ բերել։ Խաղաղութի՛ւն լիցի նմա, և ամենեցուն որք կը հետեւին իսլամութեան։»

Եւ ընդ հոգւոյդ քո՛ւմ, ողորմելի՛ Մուհամմէտ Ուէպ։

Սարգիս Մ Թորոսեան որ Հայկական ճաշարան ունէր, 71 Harrison Ave. ի Պոսթըն, փոխադրած է 52 S. Margin St. Արեւելեան խոհարարութիւն, համեստ գներով, Հայոց խիստ յարմար. տիփոներուն խիստ մօտիկ։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հարստահարութեանց և Դրան հակահայ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց շրջափոխութիւնն։

Գին 20 սէնթ կամ մէկ ֆրանք։

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի։ 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի, 1891, գին 1 թալէր կամ 5 ֆրանք։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, նախապէս «Արեւելք»ի մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան։ Գին 20 սէնթ կամ 1 ֆր.

ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ ՀԱՅՈՑ 1879։ Սպառած։

«ՄԱՐՋԱՐԱՆ», դասագիրք զինուորական կան կրթութեան, բազում ձևերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի գին 50 սէնթ կամ 2ու կէս ֆրանք։

NATIONAL MUTUAL INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

ԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴԱՐՁ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ին՞չ ըսել է, գիտէ՞ք, Հայեր։

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք։

Մարդ մի, որոյ առողջական վիճակը քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշկին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ տարին այսչափ թալեր, 20 կամ 30 կամ աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր ժառանգորդք կ՚ընդունին հազար թալեր, եթէ պայմանն հազար թալերի է, կամ մինչև հինգ հազար թալեր, ըստ պայմանին։

Երբ մէկը այսօր անդամ ընդունուի, և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ, և դժբաղդաբար վաղն մեռնի, պայմանագրեալ հազար կամ աւելի թալերն կը վճարուին ընկերութեանս կողմանէ այն ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն կնքուած լինի։

Այս մասին հետաքրքիր եղողները «Հայք» ի խմբագիրն կրնայ աւելի տեղեկութիւն տալ

NORBERT FRANCK

ԴԵՂԱԳՈՐԾ

311 7դ. Էվինիու — Նիւ Եորք

27դ. և 28դ. Փողոցներու միջև

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

ՎԱՅԵԼՈՒՉ ԶԳԵՍՏՆԵՐ

գնելու համար

եկ

THE STAR CLOTHING Co.

Գին կտրել չկայ

Վասն զի մէկ գին միայն ունի, բայց չափաւոր և ճիշդ գին։ Մեր հասցէն է

385 *Մէյն Փողոց, Ուուսթըր,*

385 Main St. — Worcester, Mass.

RIPANS TABULES

REGULATE THE
STOMACH, LIVER AND BOWELS,
AND
PURIFY THE BLOOD.

A RELIABLE REMEDY FOR

Indigestion, Biliousness, Headache, Constipation, Dyspepsia, Chronic Liver Troubles, Dizziness, Bad Complexion, Dysentery, Offensive Breath, and all disorders of the Stomach, Liver and Bowels.

Ripans Tabules contain nothing injurious to the most delicate constitution. Pleasant to take, safe, effectual. Give immediate relief.

Sold by druggists. A trial bottle sent by mail on receipt of 15 cents. Address

THE RIPANS CHEMICAL CO.

10 SPRUCE STREET, NEW YORK CITY.

Ripans Tabules are of great value.

Ripans Tabules cure headache.

Ripans Tabules cure constipation.

Ripans Tabules : for sour stomach.

Ripans Tabules : for liver troubles.

Ripans Tabules : a family remedy.

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ. Էվինիու — Նիւ Եորք

26դ. և 27դ. Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Ո՛ Հայեր,

որ կը բնակիք Ուուսթըրի մէջ, ձեր ոտքին յարմար են իմ դիմացկուն կօշիկներ, և ձեր բանին կուգան իմ գներս։ Իմ անունս Լաշանս է, և խանութս կը գտնուի Ֆրոնթ սթրիթի 60 նիւմէրոն։ Միայն մէկ գին ունիմ. պազար չեմ ըներ։ Ո՛վ որ կ'ուզէ չխաբուիլ և չունչը չհատցունել գին կոտրելու համար, և ո՛վ որ չուզեր որ ոտքն նասըր լինի, թող գայ և իմ ընտիր կօշիկներն փորձէ։

T. LACHANCE, կօշկավաճառ

60 Front St. Worcester, Mass.

THE WORCESTER MECHANICS SAVINGS BANK

311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԷՔԷՆԻՔՍ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԷՆՔ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կրնան ապահովապէս դնել վերոյիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը ճարէ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտ. ամսոց կէսէն հաշուելով։

PATENTS HOPKINS & ATKINS washington, D. C. 20 years' experience write for informatian

---

BUSH & CO.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

ԳԵՂԱԳՈՐԾ

(Հաստատեալ ի 1849)

65 Front St. Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

«ՀԱՅՔ»

Թղթակալ

Ա. տարի 1տոլար 50 սէնթ կամ 7ֆր. 50ս.

Բ. տարի 2տոլար կամ 10 ֆրանք

Յակոբ Էքիզեան Կարապետ Էքիզեան

348 Fountain street 28 South Margin Street

Providence R. I. U. S. A. Boston Mass.

ԵՂԲԱՐՔ Յ. ԷՔԻԶԵԱՆ

Յովհաննէս Էքիզեան Գէորգ Էքիզեան

Էքիզեան եղբարց թէ Միացեալ Նահանգաց և թէ Կ. Պոլսոյ կամ Խարբերդու տուներու շահերն միևնոյն տան վերաբերելուն, մանաւանդ Միացեալ Նահանգաց դրամատանց միոյն հետ համաձայնութիւն մի գոյացուցած ըլլալով Եւրոպիոյ կողմերըն ստակի փոխադրութեան գներուն բաւական տարբերութիւն մը ձեռք բերած ըլլալով, կը համարձակին ըսելու թէ ամենէն վար գներով ստակի փոխադրութիւններ պիտի ընեն Եւրոպայի կամ Թուրքիոյ կողմերն։ Անոնք որ կը կարօտին ստակ ղրկել դէպի Եւրոպա կամ Կ. Պօլիս, Ատանա, Տիգրանակերտ Խարբերդ, Մալաթիա, Բալու, Ակն, Արաբկեր, Չիմիշկէզէկ, Չունքուշ, ընդհանուր շրջականերուն, պէտք է ուղղակի գրեն յիշեալ տանց հասցէներուն, որով իրենց փափաքանաց համեմատ պիտի ստանան անմիջապէս իրենց փոխանակագրերն ամենէն գոհացուցիչ կերպով, և փոխարէնը պիտի գանձուին առանց դժուարութեան և առանց որ և է ծախքի մի հարկ ունենալու։

C. F. RANDALL

177 Front ST. Worcester, Mass.

Պատիւ ունիմ ծանուցանել Ուսթըրի արգոյ հայ հասարակութեան թէ իմ վերոյիշեալ խանութին մէջ կօշիկներ և ռըպըրներ կը վաճառեմ այնպիսի գներով և այնպիսի կերպով որ անշուշտ հաճելի կը լինի իմ հայ հաճախորդաց։

Ծանուցանելով ևս թէ բացարձակապէս և ՄԻԱՅՆ ՄԷԿ ԳԻՆ ունիմ, կը սպասեմ ձեր հրամանաց և կը մնամ յարգանօք

Ձերդ

Րանտօլ